| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Հոկտեմբեր | 2019 թ. | | | Ա | 7128122132 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | | |
| 4 | Հոկտեմբեր | 2019 թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ | Ճշգրտվող հաշիվ | |
| | | | | | Սերիա | Համար |
| | | | | | | |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| Պայմանագիր | | | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] | |
| | | | | | [8] | |
| | | | | | [9] | |
| [10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) | | | | | | |

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 9 4 0 7 9 8 8 |
| [12] Անվանումը | ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 9 4 0 7 9 8 8 / 1 |
| [14] Բանկային տվյալները | ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ N 16022457801500 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48 |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | |
|---|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [18] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [19] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [21] Լրացուցիչ տվյալներ | | |
| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր Համար | |
| | Լիազորագիր Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ծառայության քանակը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Թիվ 41102919 քր. գործով դատահոգեբուժական փորձաքննություն | դեպք | 1 | 32833 | 32833 | 20 | 6566.6 | 39399.6 |
| Ընդամենը | | | | | 32833 | X | 6566.6 | 39399.6 |

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

04/10/2019 16:21:22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

30 օգոստոսի 2019թ. ք. Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Վ.Մուրադյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 41102919 քրեական գործի նյութերը,

պ ա ր զ ե ց ի՝

2019թ-ի օգոստոսի 12-ին Աթինե Յուրիկի Հարությունյանը ոստիկանության Կապանի բաժնում հաղորդում, այնուհետև նույնաբովանդակ բացատրություն է տվել այն մասին, որ 2017թ-ի հունիս-հուլիս ամիսներին Սյունիք գյուղի տարածքում գտնվող ջերմոցին հարակից քարե շինությունում, նույն շինության բնակիչ Ժորա Սերգեյի Հայրումյանն /ծնված 08.12.1957թ/ իր վեցամյա դստերը՝ Ալինա Արթուրի Աղայանին / ծնված 12.11.2011թ-ին /, փակել է սենյակում, իջեցրել ներքնաշորն ու մի քանի անգամ համբուրել դստեր սեռական օրգանները, մասնավորապես՝ հեշտոցը, և թույլ չի տվել երեխային որոշակի ժամանակ դուրս գալ սենյակից:

Դեպքի առթիվ 13.08.2019թ-ին Սյունիքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 41102919 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 12:50-ին, Ժորա Սերգեյի Հայրումյանը ձերբակալվել է այն հիմքով, որ ականատեսն ուղղակի մատնանշել է նրան որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի:

2019 թվականի օգոստոսի 20-ին որոշում է կայացվել Ժորա Սերգեյի Հայրումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ լրացած լինելով նրա քսանմեկ տարին, տասներկու տարին չլրացած՝ 2011թ-ի նոյեմբերի 12-ին ծնված Ալինա Արթուրի Աղայանի նկատմամբ կատարել է անառակաբարո գործողություններ, այսպես.

2017թ-ի հունիս-հուլիս ամիսներին իր՝ Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Բագրատունի 19 հասցեում գտնվող բնակարանում հյուրընկալելով նույն գյուղի անչափահաս բնակիչներ Արտյոմ Վարդանի Խաչատրյանին և Ալինա Արթուրի Աղայանին, տան երկրորդ հարկի բաց պատշգամբում նրանց համար խաղալու համար պայմաններ է ստեղծել՝ տրամադրելով ներքնակ: Երեխաների խաղալու ընթացքում Ժորա Հայրումյանն առաջացած սեռական կրքերը հագուրդ տալու դիտավորությամբ մոտեցել է Ալինա Աղայանին, իջեցրել ներքնավարտիքը և համբուրել նրա սեռական օրգանը՝ հեշտոցը: Դրանից հետո Ալինա Աղայանին տարել է իր սենյակ, փակել մուտքի դռան փականը, կրկին իջեցրել ներքնավարտիքը ու մի քանի անգամ համբուրել նրա սեռական օրգանը՝ հեշտոցը, որից հետո թույլատրել է երեխաներին հեռանալ:

Սյունիքի մարզի նյարդահոգեբուժական դիսպանսերից ստացված գրության համաձայն՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը 1970, 1974 և 1975 թվականներին երեք անգամ ստացիոնար բուժման մեջ է գտնվել նյարդահոգեբուժական դիսպանսերում, որի ընթացքում նրա մոտ ախտորոշվել է «Փսիխոպաթիա, դրոմոմանիայով»:

Նկատի ունենալով, որ Ժորա Սերգեյի Հայրումյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 243-245-րդ և 248-րդ հոդվածներով,

Ո ր ո շ ե ց ի

1. Թիվ 41102919 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ի փորձագետներին:

2.Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե մեղադրյալ՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

գ/ մեղադրյալ՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյալ՝ Ժորա Սերգեյի Հայրումյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը, ինչպես նաև հանրության համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ:

է/ Կատարված հանցավոր արարքով պայմանավորված Ժորա Սերգեյի Հայրումյանի /մանկահասակների նկատմամբ/ մոտ նման հոգեկան շեղումներ կամ հակումներ կան, թե ոչ:

3. Փորձագետին ներկայացնել Ժորա Սերգեյի Հայրումյանին և փորձաքննության ներկայացնելուց տրամադրել նաև թիվ 41102919 քրեական գործի նյութերը:

4. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

5. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինել քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

**ՀԿԳ քննիչ** **Վ.Մուրադյան**